



Գևորգ Էմին

Չգիտեմ սա խի՞նդ է իսկական

Չգիտե՛մ, սա խա՞նդ է իսկական,
Թ՞ե փորձում,
Կամ... կատա՞կ ես անում._
Չժպտա~լ այս չքնաղ աղջկա՞ն
Ու չերգե՞լ...
Դու ա՞յդ ես ցանկանում.
Իսկ գիտե՞ս, թե ու՞մ ես դու սիրում
Եվ ու՞մ ես անվանում լոկ.. քոնը,_
Նա երգի ակու~նքն է աշխարհում`
Ինչպես ծո՛վն,
ա՛րևն
ու կոկո՛նը...
Այն ո՞վ է Լուսաստղով հմայվում
Եվ նրան արգելու~մ... երգ ձոնել.
Աղբյուրի ակունքից ջու՛ր խմում
Եվ գրում` .
Ասում թե`
,
Նրանց պես`
նա վե~ր է բոլորից,
Մի սիրո համար նա... ավե՛լ է...
Թե իրավ նրա՛ն ես դու սիրում,
Միի~ր,

Բայց մի՛ կհախիր նոթերդ, _
Ես երգի իմ բաժի~նն եմ խլում`
Քոնը քե՛զ կմնա, Օթե՛լլո: